

տեսնուի Երեմիա Չէլչիի տողերէն, իր Պոլիս գալէն յետոյ ժողովուրդը խաբած էր՝ ինքզինքը Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտ կեղծելով:

Յովհաննէս Թիւթիւնճի, որչափ ատեն որ իր սուտը երեւան հանող չկար, շահագործած էր Պոլսեցիներու միամտութիւնը, բայց երբ ժամանակին ամէնէն գործունեայ վարդապետներէն Արզիւնի Բարձրահայեաց վանքին առաջնորդ Եղիազար վրդ. Այնթապցի Պոլիս կ'ուղեւորի, Յովհաննէս Թիւթիւնճի խոյս կուտայ հոնկէ, որպէսզի չխայտառակուի և չպատժուի:

Հաւանորէն շատ հեռու տեղ չէ գացած, այլ Պոլսոյ շրջակայքը մնացած է:

Փիլիպպոս Աղբակեցի երբ Պոլիս կուգայ, զարմանալի է որ ո՛չ միայն կը հերքէ Թիւթիւնճիի իր աշակերտը ըլլալը, այլ կ'ուրանայ անոր սարկաւազութիւնն ալ և կը բանադրէ զայն:

Յովհաննէս Թիւթիւնճի, սակայն, ճարպիկ մարդ՝ 1652 Սեպտեմբերին կը փութայ Պոլիս և հնազանդութիւն կը յայտնէ կաթ.ին, մանաւանդ «հնչուն փաստը» կը գործածէ, «բազում դրամս տուեալ կաթողիկոսին», իբր տուգանք: Կը յաջողի կաթողիկոսէն նուիրակ նշանակուիլ Մարմարայի եզերքները, Նիկոմիդիա և շրջակայքը՝ ձէլալիներու արչաւանքի միջոցին հաստատուած հայ գիւղերու համար:

Թերեւս գայթակղեցուցիչ թուի Փիլիպպոս Աղբակեցիի պէս մեծարուած, յարգելի և իմաստուն յաթողիկոսի մը այս արարքը, որ պարզապէս կաշառքով պաշտօնաբաշխութիւն կը նշանակէր. սակայն ժամանակին պայմանները և ըմբռնումները բոլորովին տարբեր էին և երբեմն այս տեսակ զիջումները հարկադրական կը դարձնէին, նիւթակտն հաշիւներով: